

11037

C.1930/1333



ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ

ԱՐԱՎԻՆ



БИБЛИОГРАФИЧЕСКИЙ
ИНСТИТУТ
МОСКОВСКАЯ ОБЛАСТЬ
Государственный
СССР



3кбп

7-62

ՊՐԱԼԻՍ 1929

22 JUL 2013

11037

0.1930/13

Հ
ՀԱ1862

ՅԿԻՈՒ

Կ. 62

24 SEP 2006

1 DEC 2009

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ
ԱՐԱԶԻՆ
ԱՐԾԱՎԿԻՆ

ԳՐԱԴԱՐԱՆ
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЧЕСКОГО
Академии Наук
СССР

ԼՈՒԽՈԿՈՍԱՏ
ԹԻՖԼԻՍ 1929

ՄԵՐ ԶԵՐՄ ՎՈՂՋՈՒՅՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԻՌ-
ՆԵՐՆԵՐԻ ԱՐՇՎԱՆ—ԼԵՆԻՆՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ
ՍՔԱՆՉԵԼԻ ՀԱՎԱՔԻՆ

Հոկտեմբերյան հեղափոխությունը մի ճեղքվածքն
և կապիտալիստական ճակատի վրա, վոր բաց և անում
դեպի սոցիալիզմ և կոմունիզմ տանող մեծ ճանա-
պարհը:

Լենինի գծած այդ ճանապարհով, ՍԽՀՄ լենի-
նյան կոմուն. կուսակցության ղեկավարությամբ հաղ-
թական կերպով, առանց նահանջելու առաջ և գնում,
բարձր պահած համաշխարհային սոցիալիստական հե-
ղափոխության, բոլշևիկյան դրոշը, տանելով իր հե-
տեւից ամբողջ աշխարհի աշխատավորության և ճնշշ-
վածների մասսաները:

Հոկտեմբերյան որերից մի կատաղի կոիվ և ըս-
կված հաղթող սոցիալիզմի և կորստի դատապարտ-
ված կապիտալիստական աշխարհի միջև:

Համաշխարհային իմպերիալիզմը, տարված ԽՍՀՄ
խորտակելու մտադրությամբ, իր մութ ուժերի զորա-
հավաքով և զբաղված, սկսած կեղծ սոցիալիստներից
և բանվոր դասակարգի դավաճաններից, վերջացրած
լեհական պաներով և մանջուրական բանդիտներով:
Նա ատում և սոցիալիզմ կառուցող յերկիրը՝ համաշ-
խարհային սոցիալիստական հեղափոխության այդ հե-
նարանը:



59879-66

Տպ. հրատ. «Զարյա» Վուստոկան-ի Պատկեր № 1474 Գլավիտ 1191

Կոիվը ԽՍՀՄ-ի դեմ, բուրժուազիայի դասաշարգային մեծ կոիվն ե պղողետարիատի դեմ: Բուրժուազիան արագ և յեռանդուն կերպով ոգնություն և փոխարինողներ ե պատրաստում իր դասակարգային դիրքերն ամրացնելու համար: Նա ջանք ե թափում նվաճելու և կազմակերպելու յերիտասարդությունը՝ կապիտալիստական ամրություններին մերձեցող սոցիալիզմից պաշտպանելու համար:

Այդ տեսակետով նա դաստիարակելում ե վոչ միայն բուրժուազիան, այլ և բանվորական յերիտասարդությունը, կազմում ե նրանից ֆաշիստական կազմակերպություններ, հրավիրում համագումարներ և ամեն միջոց գործ դնում՝ պատրաստելու մի սերունդ, վոր գիտակցությամբ, դգացմունքով և գործով հավատարիմ լինի կապիտալիստական հասարակակարգին:

Իսկ մենք, սոցիալիզմ կառուցողներս, պետք ե զգաստ լինենք, վերաշինենք ժողովրդական տնտեսությունը սոցիալիստական սկզբունքներով, մաքսիմալ կերպով ուժեղացնենք ԽՍՀՄ տնտեսական ուժը, այն հաշվով, վոր մոտագայում վոչ թե հասնենք, այլ գերազանցենք զարգացած կապիտալիստական յերկիրները: Դրա համար անհրաժեշտ ե անխախտ ամրացնել մեր ինքնապաշտպանության ունակությունը: Վորպեսզի թշնամու բոլոր փորձերն ու հարձակումները փշելին, հարվելով աշխատավոր մասսաների կոլեկտիվ և հեղափոխական կամքին, մասսաներ, վորոնք իրենց ուժեղ և կուռ ուսերի վրա տանում են սոցիալիզմի և կոմունիզմի շինության ծանրությունը, վորոնք անհողողդ կանգնած են խորհուրդների յերկրի կարմիր սահմանների պաշտպանության դիրքերում:

Միաժամանակ անհրաժեշտ ե մաքսիմալ կերպով զարգացնել մեղ մոտ աշխատանքները յերիտասարդությունը կոմունիստական վոգով դաստիարակելու գործում:

Վորպես զի ամրանան լինինյան բանակի պահատն ու շարքերը վորպեսզի պատրաստի նորանոր փոխարինողների շարքերը: Կոմդաստիադակությունը նուռապիսի դժվարին խնդիր ե, վոր կապված ե ամենողջապես մեր սոցիալիստական շինարարության ընդհանուր խնդրի հետ:

Յերեխաներ, դուք պետք ե լավ իմանաք, վոր կոմունիստական հոգով դաստիարակվելը կընչանակե ըմբռնել մեր սոցիալիստական շինարարությունը, նրա վերաբերյալ բոլոր խնդիրները, ըմբռնել դասակարգային կենդանի կոիվը՝ հանուն այդ խնդիրների իրականացմանը քաղաքում և գյուղում:

Կոմդաստիարակությունը վորքան խոր և ամուր լինի, այնքան ել լրիվ կըլինի ձեր կյանքի, ձեր ուսման և ազատ ժամերի կազը մեր շինարարության և նրա հեռանկարների հետ:

Ձեր հավաքը ստանում ե բացառիկ կարեոր նշանակություն այժմ, յերբ դրված և վճռվում են սոցիալիստական շինարարության խնդիրները և յերբ դասակարգային կոիվը չափազանց սուր բնավորություն և ստանում թե յերկրի ներսը և թե սահմանից դուրս և մանավանդ, յերբ միաժամանակ ձեզ հետ միասին բուրժուական յերկներում տեղի յեն ունենում ֆաշիստական յերիտասարդության համագումարները:

Անդրկովկասյան պայմաններում ձեր արշավը ստանում ե ինտերնացիոնալ զգացմունքի կոնկրետ

դաստիարակության նշանակություն վոչ թե միայն ձեզ համար, այլ և բոլոր աշխատավորների: Ձեր հավաքի ազգեցության տակ յուրաքանչյուր հասունացող պատանի պետք ե մոցնե իր գիտակցության մեջ այս միտքը. «Մենք հայերս, թուրքերս, վրացիներս, արևագցիներս, ոսերս հույներս, ոռուներս և այլն վոչընչով, բացի լեզվեց, չենք տարբերվում իրարից: Իսկ մեր կյանքի ուղիները, շահերը, նպատակները ձըգտումները միենույնն են—բանվոր դաստիարակի մարտական դաստիարակային շահեր»:

Մենք համոզված ենք, վոր մեր լենինեան կոմյերիտի միջոցով կազմակերպվող հավաքը պիտի գրավե մեր խորհրդային հասարակայնության լուրջ ուշադրությունը և սերը, վորպես նոր շրջան աշխատավորության յերեխաների դաստիարակության կազմակերպության գործում: Ձեր արշավ—հավաքը ստուգատես ե մեր նվաճումների կոմունիստական դաստիարակության բնագավառում, ստուգատես թերությունների, սիալների, նոր հեռանկարների և նոր ուղիների:

Խորհրդային հասարակայնությունը մանավանդ անդրկովկասյան լուսաշխատվորները, չեն կարող կոմունիստական կուսակցության և կոմյերիտի հետ միասին չլինել այդ մեծ գործում: Ձեր արշավը, պատանի պիտոներներ, պետք ե լծակ լինի խորհրդային հասարակությունը բարձացնելու գործում, վոր նա կարողանա մասնակցել և պայքարել կոմդաստիարակությունը լայնացնելու և խորացնելու բնագավառում: Մեր հասարակության այդ մասնակցության նշանակությունը կանդրադառնա և մեր աշխատանքային դպրոցների վրա: Մեր դպրոցը և մանկական կոմու-

նիստ, շարժումը՝ աստիճանի սերտ կապված են իրար հետ, վոր ձեր աշխատանքի զարգացումը անպայման կառողջացնի և կը խորացնի մեր դպրոցի գործունեությունը: Մեր դպրոցը ունի իր դժվարությունները, վոր կարելի յե հաղթել միայն ձեր ոգնությամբ:

Ձեր արշավը պետք ե դնի մեր յերիտասարդության կոմունիստական շարժման, քանակով և վորակով, աճելու հարցը: Նա պիտի ազդանշան տա՛ բացինալիզացիայի ենթարկելու դաստիարակության գործը լենինիզմի վորով:

Այդ ե արշավի կազմակերպչական դերը: Ձեր արշավի գիրեկտիվներով և ղեկավարությամբ ամբողջ պատանի պիտոներ և աշխատավոր յերիտասարդությունը պետք ե յեռանդուն կերպով մասնակից լինի ինդուստրալիզացիայի և կոլեկտիվիզացիայի սկզբունքներով տարվող մեր տնտեսության վերաշնուրության գործին: Պետք ե պայքարի աշխատանքային դաստիարակության և իսկական սոցիալիստական աշխատանքային դպրոցներ ստեղծելու համար, Պետք ե պայքարի երիտասարդության պրոետար-դասակարգային, ինտերնացիոնալ վորով կը թերու, աշխատանքային դիսցիպլինայի և ուսումնական աշխատանքի արտադրությունը ուժեղացնելու համար, մասսայական նախադպրոցական կրթություն կազմակերպելու, մանկական միջավայրի կազմակերպության և մանուկ հասարակության ապահովելու անհրաժեշտ տվյալներով՝ կոմունիստական առողջ սերունդ ստեղծելու համար: Կուլտուրական հեղափոխության լայնացման մոմենտին յերիտասարդությունը պետք ե լինի նրա առա-

զին շարքերում, մարքսիստ-լենինյան աշխատավորության, նոր կենցաղի և նոր կոմունիստական բարոյականության ուղեկիցը՝ անհաջող կոիվ մղելով հավատի, նախապաշտամունքերի հետամնացության, տղիտոթյան և մեր հին կյանքի վնասակար մնացորդ ների գեմ:

Իրագործելով լենինի պատվերները, յերիտասարդությունը իր ուսման և դաստիարակության յուրաքանչյուր քայլը պետք է կապե գործնական հասարակական կտրեսը գործի հետ.

Պլանային և կոլեկտիվ մասնակցությունը սոցիալիզմի շինարարության և նոր կյանքի մեջ դա կոմդաստիարակության սկզբունքն է, վոր պետք և վիովին իրադրութիւն:

Համաշխարհային կոմունիստական շարժման պատահի պիոներները, ձեզ վրա յեն այսոր հառած բոլոր աշխատավորների հայացքները:

Զինվեցեք զիտությամբ, սովորեցեք կառուցել սոցիալիզմ, կոփեցեք ձեր զգացմունքը, կամքը և յեռանդը պայքարելու համաշխարհային հեղափոխության և կոմունիզմի համար։ Սոցիալիստական մրցակցության հրավիրեցեք իրար՝ մասնակցելու նոր կյանք ստեղծելու գործում։

Համաշխարհային պրոյետարիատի առաջնորդ և յերիտասարդության լավագույն բարեկամ լենինի պատվերները իրականացնելու համար յեղեք պատրաստ։

Վրաստ. Լուսժողկոմ. Փոխ.
Մարիա Որախելաշվիլի.

ԱՆԴԿՈՎԿԱՍԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ.

Բազմազգի Անդրկովկասի պիոներական կազմակերպությունը այսորվա որը իր շարքերում հաշվում է 220 հազարից ավելի յերեխաներ։ Նոր սոցիալիստական հասարակության կառուցողների այդ բանակը դա քաղաքական կարենության խոշոր գործոն է վորը պահանջում ե մեր հասարակայնության կողմից հատուկ ուշադրություն։ Մինչդեռ այն ուշադրությունը և միջոցները, վոր գործադրվում են աշխատավորների յերեխաների կոմունիստական կրթության վրա, բոլորովին անբավարար են լուծելու մեր առջև կանգնած հսկայական, ըստ մեծության, և խորին, ըստ բովանդակության, խնդիրները։ Անող սերնդի դաստիարակության պրոբլեմը ամենաբարդ խնդիրն է, մինչդեռ այդ խնդրով առայժմ զբաղված են բացառապես ինքը պիոներական կազմակերպությունը և մի քանի կուլտ-կըրթական հիմնարկներ (այն ել թույլ կերպով), այն ինչ կոմդաստիարակության հարցերը միշտ պետք ե մղեն թե անտեսական և թե այլ մարմինները, նույնպես և վողջ խորհրդային հասարակությանը։

Անդրկովկասի պայմաններում յերեխաների կըրթության խնդիրը բարդանում է Անդրկովկասում ապրող ազգերի հետամնացությամբ և անկուլտուրա-

կանությամբ (կենցաղը, Փանատիկոսությունը, հոգևորականության ազդեցությունը և այլն):

Յերիտասարդության և յերեխաների վրա ազդեցություն ձեռք բերելու պայքարը ամենասուր ձև երեւնդունում: Դասակարդային թշնամին, հենվելով այստեղի ժողովրդերի կուլտուրական հետամնացության վրա ողտագործելով ինչպես կուլտուրական, նույնպես և տնտեսական կարգի մոմենտները, ամեն կերպ ձըգտում է տարածել յերեխաների վրա իր ազդեցությունը: Կուլտակների հայտարարությունը իրենց տնտեսության մեջ ապրող պիոներներ թողնել պիոներական ջոկատը հակառակ գեպքում նրանց անկարելի կլինեն մինչև տարվա վերջը՝ գործում թողնել: Կամ զատկական տոների առաջ խոստովանքին ծնողներին արած առաջարկությունը—վոր նրանք յեթե դուրս չը բերին իրենց յերեխաներին պիոներական կազմակերպություններից, հնարավոր չե մեղքերի քավումը: Այդ առաջարկության հետևանքն այն լեզավ, վոր յերեխաներին այլևս չելին թողնում պիոներական ջոկատները, չնայած նրանց բողոքներին և արտասուրներին: Այդ ամենը ցույց է տալիս՝ թե վորքան լուրջ ե մանկական ճակատի հարցը մեզանուժ:

Ուրիշ գեպքերում հոգեորականունը դիմել է ազիտացիայի և բնակչության, երեխաների մեջ լուրեր տարածելուն, վոր պատերազմ կլինի և բուլոր կոմունիստներին, կոմյերտներին ու պիոներներին կսպանեն, նախազգուշացնելով, վորպեսզի հարկադրի նրանց կազմակերպությունից դուրս գալ: Իրենց նպատակին հոգեվորականությունը և կուլտակությունը համապատասխան եյին Անդրկովկասի մութ անկյուններում: Բոլոր գույների

մանը բուրժուազիայի ամենաուժեղ ազիտացիան ուղղվում եր դեպի պիոներական կազմակերպության կազմալուծումը և մանկության վրա տղեցության ուժեղացման: Բոլոր հարցերում ել նա առաջ ե բերում մանկական խնդիրը: Կուլակությունն ու հոգեորականությունը ողտագործում ե ազգային մոմենտները և հենց դրանով ել կասեցնում ե յերեխաների խնտերնացիոնալ կրթությունը: Այդպես՝ հայկական ջոկատի պիոներին հարց են տալիս—վողջույն պիտի տամս թյուրք առաջնորդին ու պիոները պատասխանում ե՝ «Եհարկե վոչ. չե՞ վոր թյուրքերը կոտորել են հայերին. Նրանք մեր դարեւոր թշնամիներն են»: Այս փաստը պարզ ապացոյց ե, վոր դասակարգային թշնամին ամենուրեք (դպրոցում և այլն) ձգտում է տարածել իր ազդեցությունը յերեխաների վրա: Մանկական միջավայրը մուտք է գործում և շովինիստական դրականությունը: Այսպես, պատի լրագրի համար հատկացված մի վոտանախորի մեջ այսպիսի մի միտք է սպրդել. Զարկեցեք Լեհաստանի ունիին, ջարդուրուրդ արեք և Տաճկաստան՝ չայստանի այդ դարարար թշնամուն» և այլն:

Դասակարգային սրված պայքարը գյուղում վոչ պակաս չափով բռնել ե և յերեխաների շերտերը—ջոկատային առաջնորդին ծեծելը կուլակային յերեխաների կողմից, վորովհետև վերջինս խանգարում եր նրանց կազմալուծող աշխատանքին ջոկատում:

Կուլակային տարրերը գյուղում, կրոնական դպրոցները, մեղքեսեները, ազիտացիայի եյին մղում բնակչության մեջ և գրգռում մասսաները կործանելու համար խորհրդային դպրոցները:

Քոլոր վերև թված մոմենտներով պայմանավորված են մանկական կոմունիստական շաբաթման գարգացմանդժութ-վարությունները, վորոնք մասսամբ հաղթված են շնորհիվ այն խոշոր պշտամանքին, վոր կատարվել ե Անդրկով-կասի պիոներ-կազմակերպության կոկմից: Վերջին տարիներս Անդրկովկասյան պիոներական կազմակերպությունը կարողացել է իր շարքերը գրավել 220.849 մարդ այսինքն, պիոներական հասակի յիրեխաների 19,8 առկ.): Իսկ ինչ վերաբերում ե մյուս մասին—894.000 յերեխան (այսինքն 81,2 առկ.) գրանք զբա-նվում են պիոներական կազմակերպությունների ու-շաղրությունից և աղղեցությունից զուրս: Արմատա-կան բեկուսը վողջ հասարակայնության վերաբերմուն-քի դեպի յերեխաների կոմիտությունը—դա մեր հետագա նվաճումների գրավականն ե: Հիմնական խընդիրը, վոր կանդնած ե յեղել վերջին յերկու տարինե-րի ընթացքում, պիոներական կազմակերպություննե-րի առջե, կրթության գործի դրության բարելավու-մը կուլտուրական հիմնարկների ողակերում (ժողովր-բեր, մանկապահետեղներ, դպրոցներ և այլն) և միաժա-մանակ պիոներաբան կազմակերպության վողջ գործու-նեությունն ուղղված ե յեղել մանկական մաս-սաների յերկրի հասարակաքաղաքական կյանքի մեր-ձեցումը ե նրանց յեռանդը ուղղելու դեպի սոցիալիստ. շինարարության աշխատանքի: Այդ ինսդիբների լուծման ճանապարհին դանդաղ, բայց համառ շաբաթ-վում ե Մ.Կ.Կ. կազմակերպված մասնակցության բագ-մաթիվ փաստեր. ինն ցիրուցան ձեւերի փոխարեն (կա-մուրջների նորոգումը, գյուղական տնտեսության ոգ-նության և այլն), յարկաթի կտորների, թղթի հավայ-

քման, խորհուդների նախընտրական կամովանիան, կուլա-արշավ հունձի համար և այլն, — այդ բոլորը վկայում ե մանկական մասսայի հասարակա-քաղաքական ակ-տիվության հսկայական աճման մասին: Ամենազլիսա-վորը՝ սոցիալիստական մբցակցության ընբռնումը յե-րեխաների կողմից:

Վերջին տարին առանձնապես բնորոշվում ե ման-կական նախաձեռնության զարգացումը: Այդ հիմքե-րի վրա աճում և ամբանում ե պիոներական կազմա-կերպությունն Անդրկովկասում: Պիիներական ջոկատ-ներում հնացած հանձնաժողովների փոխարեն ստեղծ-վում են յերեխաների նախաձեռնող խմբեր—Մեծ հե-տաքրքություն ե ցուցաբերում յերեխաները գյուղ-տնտեսական խմբակներ կազմակերպության գործում (ինչպես՝ թունաբուծություն, մեղվարության, ձիա-բուծության և այլն) և արտադրության խմբակներում (ատաղձագործության, փականադրության, կազմա-րարության և այլն):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՓԱՍՏՖԵՐ.

Բագու. Եթ ջոկատը Բագվա խորհրդի առջև «Վըշկա» լրագրի միջոցով հարց ե հարուցել ջոկատի հարևանությամբ գտնվող գինետունը փակերու: Քա-ղաքային բայոնի առաջին, 45 ջոկատները—կազմակեր-պության մեջ 60 մարդ, հավաքել ե 10 փութ յերկա-թիլու: Հավաքված 400 իր, հոգուտ կարիքավոր աշա-կերտների: Յերկու միտինգ ե կազմակերպելված կրոնական տների փակման համար, դպրոցական կոռպերատիվ շինությունների բնակիչներին զուրս հանելու համար: Կոլեկտիվ կերպով հաճախել են պա-

տանի հանդիուականի թատրոնը և կինո, աշխատանքի տան հետ միասին։ Պիոներների կենցաղի հետազոտությունն են կատարել։ Ծնողական ժողով և հրավիրված, ուր ստեղծվել ե ծնողական կոմիտե և ծընդուներից ըտրվել հինգ հոգի կոմիտեն վարելու համար։

Բագվա մի բայոնում կազմակերպված են հոկտեմբերիկներից 5 ջոկատ, 4 խումբ։ Անց ե կացված պիոներների բայոնական հավաք, վոր գրավել եր 4000 յերեխաներ։ Հայտնաբերված են 142 անդրագետներ, նրանցից կազմակերպել են 8-ամյակներ-56 հոգու, իսկ ֆլացած 86 սովորում են ջոկատներին կից։ Հայտնաբերված են 629 անդրագետ ծնողներ։ Դրանցից գրագիտության խմբերն են մտցված 250 մարդ, իոլոր ջոկակները աշխատում են ձեռնարկներին կից գրադարաններում։ Հարց ե արված հեռացնելու յերկու մանկավարժի, վորոնք անհամապատասխան են իրենց կոչման։ Ստորագրվել են ինդուստիացման փոխառության՝ Զոկատները 790 սուբլու, դպրոցները 4970 սուբլու։

Թիֆիիս։ Անց են կացրել յերկոթե հավաքում մի սայոնում, մասնակցել են 60 պիոներներ, հավաքքին, մի բայոնում, մասնակցել են 6000 պիոներներ։ Հավաքված մոտ 1000 փուլթ լու։ Անկազմակերպ յերեխաների շրջաններում զրուցներ են կազմակերպում։ Ինչու չպետք ե տրամադայներից կախընկերներ, ինչու չպիտի խաղալ կոճի, սկ փող և չը կովել։ Սարքում են յերեխաների ընդհանուր ժողովներ ուր պատմում են պիոներ-ջոկատի աշխատանքի և կուլտարշավի մասին։ Նկատվում ե մասսաներով պիո-

ներական ջոկատներ մտնելը. գրավել են 425 հոգի։ Մանկավարժները սիրով ոգնում են պիոներների կուլտարշավի ժամանակ՝ պատրաստում են հետամընաց աշակերտներին, սովորեցնում են անգրագետ յերեխաներին և հասակավոր բանվորներին։ Անց են կացրել լենրայոնում յերկու հազարանոց դեմոնստրացիա։ Պլակատների վրա պահանջներ՝ «Հայր, թող քո արբեցողությունը», «Հայր, հարբեցողությամբ այլանդակ ես դարձնում մեր կյանքը», «Ծնողներ, մի հայհոյեք, մի հարբեք, յեկեք կառոյցենք կուլտուրական կյանք»։ «Բոլոր յերեխաների և մայրերի անունից մենք պահանջում ենք, վոր դուք իմնելը թողնեք» Գուք փողը ծախսում եք գիշենու վրա և մեզ թողնում առանց գրքի և լրագիրների») (Լենինյան բայոն)։

Կուլտուր-կենցաղային արշավը խոշոր քաղաքային կազմակերպություններում ունեցելե խոշոր մաքսիմալ հետեւանք։ Ախլցիսայի գավառում (Վրաստան) պիոներները կազմակերպել եյին լիկերզներ ազգարնակության անգրակիտության գեմ պայքարելու համար։ Կամպանիա յեն անցկացրել մաքուր հագուստի, գյուղական գլոցականների համար՝ ոգնելու չքավոր աշակերտներին, զրուցներ են գյուղում անց կացրել սանիտարական և առողջապահության մասին։ Այդ միջոցները շատ կարեոր են յեթե նկատի ունենալ Ախլցիսայի գհետմնաց գյուղը (970/0 անգրագետներ, ծանր սանիտարական զրությանը վոր առաջ ե բերում հիվանդություններ ազգարնակության մեջ)։ Կուլտարշավի ժամանակ Գորի գավառում պիոներները սովորեցնում եյին անկազմակերպ ու անգրագետ յերեխաներին։

Ամեն մեկ անգրադեսին կցված ե յեղել մի գրագետ: Պիոներները ագիտացիա յեն մղել ծխելու, արբեցողության դեմ, վորի ազդեցության տակ կոմյերիտաների խմբերը թողնում են ծխելու:

Քութայիսի գավառում բացի այդ անց են կացել մրցակցություն կազմակերպությունների մեջ։ Պիուներները կպցում եյին պատերին պլակատներ և լրունգներ։ Դպրոցներում և ծնողական ժողովներում անց են կացրել պատի թերթեր, կազմել երեկոներ ինքնաքննադատության և մրցություն ֆիզկուլտուրայից։

Սբիսագիտում անց ե կացվել դպրոցական և ընտանեկան հակած-սանիտարության դեմ պայքար; Հավաքելեն անխնամի յերեխաներին և տեղավորել մանկատներում; Բացատրել աշակերտների և տնայնագործների դրության մասին, ակումբներում յերեկոներ են անց կացրել. կազմակերպել են կարո ու ձեռի, ըաղեռ-հեռախոսների խմբեր; Մտեղձվել ե պիոներական պրոֆիլակտիկ ամբողջատորիա;

Խորհուրդների վերընտրության կամպանիան
գրկել եր գրեթե ամբողջ կաղմակերթությունը և
դյուռը

Բազու (Լենինյան ռայոն). ջոկատ 65 «Վիշվա» լրագրի բրիգադի առաջադրությամբ կես ժամփա ընթացքում պիոներները հավաքել ելին Ստեփան Ռազմինի արվարձանի ծնողներին ժողովի։ 43 և 7 ջոկատները մասնակցել են մեծերի հառ այլ ձեռնարկությունների կազմած մըցակցությանը և իրենց հերթին հրավիրել են ընկերական մըցման նրանց ջոկատներին,

ուղարկել են Նրանց հետախույզ խմբակը, փոխանակել են խորհրդներին նվիրված պատիթերթերը:

31.51 Ճոկատները կազմակեռպել են մանկամսուր-
ներ, ուրի հավաքելին բոլոր մանկահասակներին, նրանց
հետ անցկացրել են զանազան խաղեր, յերգեր և աշ-
խատանքներ։ Մյուսեսով հնարավորություն են տվել
ծնողներին մասնակցելու խորհրդների վերընտրու-
թյանը։

54—ջոկատը մշակնել ե ողակային ժողովներում
հրահանգ—պատվեր 14 կետերից բաղկացած, վորով
պիոներները պահանջում են խորհրդից իրագործելու մա-
նուկների առաջադրանքները՝ որինակ, ույզոններում
բաց անել հատուկ մանկական ընթերցարաններ, կադ-
մակերպել մանկական թատրոնի բեմադրություններ,
եժանացնել ելեքտրական յերկաթուղագծերի տոմսերը
մանուկների համար, կրծատել վոգելից խմբչքների վա-
ճառքը: Այդ հրահանգը—պատվերը (նակազը) ներ-
կայացրված ե պիոներների հաշվետու ժողովին:

Վարանցովկա գյուղի պիոներները հրապիրել եյին
մանկական կոնֆերենցիա և մշակել եյին նախադա, ի
միջի այլոց այսպիսի կետերով. «Գյուղլիսորհրդի և
Լուսժողովատի միջոցով պահանջում ենք գումարներ
տնտեսություն հիմնելու գյուղյերիտ դպրոցին կից:
Պահանջում ենք վոր խորհուրդը և շրջգործկոմը ուժե-
ղացնեն չքավոր աշակերտների ողնությունը, աջակցու-
թյան կանչելով հասարակական հիմնարկներին. ունե-
վոր Վարանցովկայում շատ կան մանուկ բատրակներ
և յերեխա պահողներ, վորոնք անխնա շահագործվում
են. Մենք պահանջում ենք գյուղլիսորհրդից, վոր նա
իր վրա վերցնի նրանց աշխատանքի պաշտպանու-



թյունը և հնարավորություն ստեղծել նրանց սովորելու, նախորդք հետազոտման յինթարկելով նրանց աշխատանքի պայմանները:

Դարավագյաղի գավառում կազմակերպել են մահամսուրներ 11 գյուղում վերընտրական որերին: Մսուրների պարապմունքները հարմարացրված եյին համապատասխան կազմակերպությունների հետ և գյուղի ամբողջ տեխնիկական աշխատանքը հանձնված եր պիոներ ջոկատին:

Սխալցխայի գավառի յերեխաների խորհրդին ուղղած նակազը՝ «Քաղաքում և գյուղերում շատ կան մանուկ պրոլետարներ, բարրակներ և արհեստավորի աշակերտներ, վոչ վոք նրանց մասին չի հոգում. խորհուրդը պետք ե վերցնե նրանց հոգացողությունը: Պահանջում ենք խորհրդից՝ հետազոտել փոքրիկ բարրակների և աշակերտների աշխատանքի պայմանները և ստուգել թե վորքան տերերը ճշտությամբ են կատարում պայմանագիրը, խորհուրդը վոչ մի միջոց ձեռք չի առել ծնողների ծեծերի դեմ. մեծ ուշադրություն և խնանք յերեխաներին»:

Պիոներները յերեան հանեցին գավառի ձայնագուրկներին (Քութայիս):

Առաջին անգամնե, վոր այս չափով հանդես ե գալիս պիոներ կազմակերպությունը քաղաքական աւագարեղում, վորպես գլխավոր կազմակերպիչ մանկական մասսայի և ղեկավար նրա ակտիվության, պաշտպան դպրոցական և վարձու յերեխաների աշխատանքի և իրավունքների, նույնպես և կազմակերպիչ դպրոցական և վարձու յերեխաների կոնֆերենցիաների իրեն

կուսակցության ոգնական և նրա գիծն անցկացնող մի կարևոր գործոն:

Կանոնավոր և կազմակերպված լնթացք ե ունեցել յերեխաների նախաձեռնությունն ու ինքննազործանությանը հասարակական ոգտավոր աշխատանքի հիմունքով, անհատական ցանկություններն ու շահերը շաղկապվելեն պետության անհրաժեշտ հասարակական ոգտակար աշխատանքի խնդիրների հետ.

Սակայն, այդ գործը յեղել ե միայն պիոներ—աշխատանքի, բովանդակության վերակազմության սկիզբը: Ամբողջ կազմակերպությունը լծված չի յեղել կատարված աշխատանքին, և վոչ ել ամբողջ մանկական մասսան ե գրավել այդ գործնական աշխատանքներին:

Մանուկ մասսայի նախաձեռնության և ինքնագործունեյության զազգացման հետ միասին Մ. Կ. Կ. (ДКО) առաջ պահանջ ե գրվում մի շարք կայաններ կազմակերպելու համար, վորոնք պետք ե ոգնեն այդ խմբակներին. որինակ բացված ե Անդրկովկասյան մանկական գյուղատնտեսական տեխնիկական կայանը, վորի նպատակն ե տեխնիկայի և գյուղատնտեսության խնդիրների մասին կոնսուլտացիա (գրավոր և բանավոր), գործնական աշխատանքը արհեստանոցներում, ինչպես և խորհուրդներ, ոգնություն պատասխի գյուղաբարներին դժվարին հարցերում, դպրոցների և կոլեկտիվների աշխատանքային խմբակների ղեկավարությունը, վերապատրաստում և պատրաստում գոյություն ունեցող խմբակների ղեկավարների:

Այդ կայանը կազմակերպելու գերծում, ինչպես և նրա աշխատանքների ընթացքում, պահանջվում ե

հատուկ ուշադրություն ինչպես տնտեսական, այնպես
և մանկավարժական ինժեներ-տեխնիկական հիմնարկությունների կողմից։ Մանուկ միջավայրի մասսայական առողջապահության ձևերից մեկն են նաև կարճատև ամառնային պիտոներ—լագերներ, մանկական սանատորիտունները, վորոնց թիվը տարեցտարի մեծանում ե և սրա հետ մեծանում նաև գեպի իրենց գրաված նյութապես անապահով մանուկների թիվը։ Հասարակությունը մասամբ կատարել իր գերը այդ լագերները (բանակ) կազմակերպելու դորձում։ Բայց պետք ե ասած, գեռ բավական մեծ չի այն ուշադրությունը, վոր արվում ե կոոպերատիվ, պրոֆեսիոնալ գիտական-մանկավարժական և հիմնարկությունների ու ույժրի կողմից։ Այն թվերն ու տեղեկությունները, վոր ունենք պիտոներների առողջության վերաբերյալ՝ պետք ասած բավական բացասական են ու գալիս են ասելու վոր այդ ուղղությամբ շատ թույլ ե տարվում մեր աշխատանքը, վորը պետք ե լուրջ կերպով ալեկոծի մեր հասարակությունը և վոր պետք նրանց ուշադրությունը գամփի մանուկներին խնամելու դործի վրա։ Չե՞ վոր բանակների կազմակերպումը դեռ ևս չի լուրծում դաստիարակության և պրոլետարական առողջ կադր պատրաստելու խնդիրը։

Անդրկովկասյան պիտոներական մամուլը բավականաչափ ամրացրել ե իր դիրքը։ Այս թերթերը մեր հանրապետությունների մեջ թե ագիտ-պրոպագանդիստ դեր են կատարում և թե ոգնում են պիտոներ ջոկատներին։

Այսոր շատ սուր ե դրվում պիտոներական պարզ պարբերական թերթեր ստեղծելու խնդիրը։

Այս ուղղությամբ թերթեր համարյա թե մենք չունենք։

Այսոր բավական ուժեղ կերպով բաղխում ե մեր պետհրատների գոները պիտոներական համապատասխան գրականություն ստեղծելու հարցը։ Պիտոներկազմակերպությունների ղեկավար մասը բաղկացած ե գլխավորապես կոմյերիտականներից, վորը դեռ ևս մանկավարժական շատ թույլ պատրաստականություն ունի, և այդ այն ժամանակ, յեր այս բանը հիմնական տարը ե կազմում, յերբ նա պետք ե ապահովի մանուկների ուղիղ, առողջ կոմդաստիարակությունը։

Այդ խնդիրը լուծելու համար, Անդրկովկասյան կոմյերիտմիությունը մի շարք միջոցներ ե ձեռք առնում պիտոներ ղեկավարներին—ողակապետներին պատրաստելու և վերապատրապելու համար։ Նա կազմակերպում ե այդ նպատակով շաբաթյա, յերկարաթյա և միամյա դասընթացները, գործուղում ե նրանց բարձրագույն դպրոցները, կազմակերպում ե ողակապետների առողջացման բազաները և այլն։

Բայց սրանք համարյա թե կուստար միջոցներ են։ Կոմյերիտմիության միջոցներով դեռ ևս չի լուծվելու պայքարի ղեկավարների, ողակապետների հիմնական կադրը ստեղծելու խնդիրը։

Բնական ե այս բանում ոգնության պետք ե գան հանրապետությունների լուսժողկոմատները և հատուկ ուշադրություն դարձնեն այս բանի վրա։ Կուսակցական կոմյերիտական, կազմակերպությունների մասնավանդ բարձր կոմիտեների ղեկավարությունը վերջին տարիների ընթացքում բավական լավացել ե

գալով կուսակցական և կոմյերիտական բժիճներին, այս-
տեղ բավականին թույլ ուշադրություն և դարձվում
այս խնդրին և պետք ե այդ ուղղությամբ հիմնական
բեկում կատարել պիոներ կազմակերպության ղեկա-
վարության ինդրում; Կուսակցական և կոմյերիտա-
կան ղեկավարների, պիոներ հանձնաժողովների հնա-
ցած ձեռքի փոխարեն պետք ստեղծվեն կոմյերիտա-
կան նախաձեռնող խմբակներ, վորոնք պետք ե նպա-
տակ ունենան մանուկների կոմդաստիարակության
լավացումն ու առողջացումը; Պետք ե այս աշխա-
տանքներին հրավիրել պիոներ կազմակերպությունները,
պետք ե կազմակերպել մանկական կոմշարժման պ-
ճակցող ըանվորական ըրիգադներ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ—
ԱՆԴ, ԿՈՎԿԱՍՅԱՍ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԻ ԱՌԹԻՎ.

Ն Ե Ր Ա Ճ Ո Ւ Ր Յ Ո Ւ Յ Ե.

ՀԼԿՅՑԵՄ 8-ԵՐՈՐԴ համագումարը, հղելով մի շարք
դժվարություններ պիոներական շարժման ասպարի-
զում, ինչպես որինակ, աշխատանքի հնացած ձեռքն
ու թույլ բովանդակությունը, յերեխաների հարցերին
բավարարություն չտալը, կուսակցական ու կոմյերի-
տական կազմակերպությունների և խորհրդային հա-
սարակայնության կողմից ցույց տրվող թույլ ոգնու-
թյունը, —նոր ուղղություն տվեց նրա աշխատանքնե-
րին, վորը նրան դուրս պիտի բերի դժվարություննե-
րից և վորով նա պիտի ընթանա իր հետագա զար-
գացման մեջ։ Այդ նոր ուղղությունն ե աշխատանքի
նոր սիստեմը, վորը հիմնված ե յերեխաների ինքնագոր-
ծունեյության զարգացման վրա և վորը պահանջում է
խորացնել հասարակական ոգտակար աշխատանքները։

8-ԵՐՈՐԴ համագումարի կողմից նշված դժվարու-
թյուններն ամբողջությամբ յերևան են գալիս նաև
Վրաստանի պիոներ կազմակերպության մեջ։ Պետք ե
վոր հաճախ, լսած լինենք մանուկներից. «Զանցրա-
ցանք կոլեկտիվ հաճախելուց, այնտեղ վոչինչ չկա,
շարունակ միևնույն բանի կրկնությունը», և կամ
ծնողների հանդիմանությունները. «յերեխաներին այն-

պիսի բան չեն սովորեցնում, վոր կյանքի մեջ պետք գա»։ Այս բոլորը միանդամայն իրավացի յե յեղել։

Մեր աշխատանքի ձեերն ու մեթոդները պետք ե բղիսեն յերեխաների պահանջներից։

Ութերորդ համագումարի վորոշումները, մասնավորապես նոր սիստեմի մշակումը բեկում առաջացրեց պիոներ շարժման մեջ։ Այստեղ, վորտեղ մի ժամանակ հանդիմանություններ եյին լսվում, այժմ հավանությամբ են արտահայտվում շարժման մասին։ Այստեղ, վորտեղ առաջ շաբաթը մի անգամ լսելի յեր լինում թնրուկի ձանձրացուցիչ ձայնը, այժմ կենդանի աշխատանք ե տարվում։ Այսպես ե ընդհանուր դրությունը ներկայումս պիոներշարժման մեջ։

Ս. Ըստանելի նոր ձևերին անցնելու հարցերը.

Պիոներաշխատանքի նոր սիստեմին անցնելու գլխավոր ու վճռական հարցին պիոներ կազմակերպությունների ղեկավար մարմինները հարկ յեղած ուշադրությունն են նվիրել։

Վրաստանի պիոներաշխատավորների հանրապետական 4-րդ խորհրդակցությունը, վոր հրավիրեց Կենտկոմը սույն թվի փետրվար ամսին, վորոշեց. «Խորհրդակցությունը, միանդամայն հավանություն տալով և ընդունելով աշխատանքի նոր սիստեմի հարատակած «շրջանը»... այժմեյական և անհրաժեշտ ե համարում, վորպեսզի Վրաստանի պատանի պիոներների կազմակերպությունը անցնի աշխատանքի նոր սիստեմին»։ Այս վորոշման հիման վրա, մի շարք խորհրդակցություններ ու դասընթացներ տեղի ունեցան թե հանրապետական մասշտաբով և թե տեղերում

(գավառներում և ռայոններում)։ Լայն բացատրական աշխատանք տարվեց իրենց պիոներների մեջ (կոնֆերենցիաներ, խորհրդակցություններ), վորից հետո վրաստանի պատանի պիոներների կազմակերպությունը արդեն գործնականապես աշխատանքի դիմեց նոր սիստեմով։ Ամենակարձ ժամանակամիջոցում (չանցավ 5-6 ամիս) աշխատանքն աշխուժացավ։ Թիֆլիսի ռայոններից մեկի պիոներները բերքատվության արշավի ժամանակ հատուկ պիոներական խըմբեր ստեղծեցին և գյուղ ուղարկեցին գյուղացիներին ողնելու համար։ Հարավ—Ռուսիայի հեռավոր լեռներում պիոներկոլեկտիվը վորոշեց յերթեեկությունը դժվարացնող ճորի միջով կամուրջ զցել վորը և իրականացրեց Կարելի յե բերել հարյուրավոր և հազարավոր նման որինակներ։ Վրաստանի պիոներ կազմակերպությունը արգեն վորոշ քայլեր և արել աշխատանքի նույն ձեերի վարարերմամբ։

Ս. Ըստանելի յեկ տեխնիկական ունակուրյաւնների պատվաստվումը.

Միանդամայն իրավացի յեն ծնողներից մեկի վերսէ հիշատակված խոսքերը։ Յերեխան պիոներկազմակերպության մեջ յեղած ժամանակ պետք է ձեռք բերի այնպիսի գիտելիքներ, ունակություններ, վորոնք նրան պետք գան կյանքի մեջ։

Աշխատանքի այս բնագավառում մեզ մոտ թերություններ են յեղել, այդ թերությունները կան նաև ներկայիս Սակայն, անցյալի համեմատությամբ, մենք ունինք նաև լուրջ նվաճումներ։

Այս բանն ապացուցվում է թեկուղ այն փաստերով, վոր պիոներները խմբեր կազմակերպեցին և ու-

Դարկեցին գյուղացիներին ոգնելու (բերքատվության, արշավի ժամանակ), վոր Թիֆլիսի յերկրորդ ռայոնի պիոներների 30—40 տոկոսը, իրենց ուժերով սարքած ռադիո-ընդունող ապարատներ ունի, վոր Բաթումում պիոներները իրենք շինեցին մոգական լապտեր դիապորտիվների հետ միասին և նկարներ ցույց տվին ծնողներին, և այլն, և այլն: Ավելացել ե արհեստանոցների թիվը կոլեկտիվներում. բարելավվել ե նրանց աշխատանքի բովանդակությունը: Այդ աշխատանքն ունի մի շարք որբեկտիվ բնույթ ունեցող արքելառիթ պատճառներ, վորալիսիք են՝ շենքի բացակայությունը, միջոցների պակասությունը և այլն, վորոնց վերացումից ե կախված նրա հետագա զարգացումը:

Պիոներների գյուղաճնեսական աշխատանքը.

Գյուղական պիոներկոլեկտիվների աշխատանքի առանձին ուշադրությունը պիտի դարձնել գյուղատընտեսական ունակություններն ու գիտենքները յերեխաներին պատվաստելու վրա: Այդ նպատակով կազմակերպված են գյուղական տնտեսության առանձին տեսակետի (որինակ, մետաքսագործության, մեղվարության և այլն) ուսումնասիրության խմբակներ, վորոնց ղեկավարության համար հրավիրված են կուլտուրական ուժեր (որինակ, մանկավարժներ, ագրոնոմներ): Կոլեկտիվների մեծ մասն ունի հողամասեր, վորոնց վրա աշխատանք ե կատարում. սակայն այստեղ պետք ե նշել այն հանգամանքը, վոր հաճախ կոլեկտիվների հողամասերը վոչչչով չեն տարբերվում սովորական հողամասերից: Այնտեղ որինակելի և ցուցադրական վոչինչ չկա: Այս յերկութի վրա պետք ե հարկ յեղած ուշադրությունը դարձնել:

Կոլեկտիվների հողամասերը պետք ե լինեն ցուցադրական, վորակեսզի գյուղացիները կարողանան նրա վրա կատարվող աշխատանքից բան սովորել: Կան դեպքեր (չնայելով վոչ—մասսայական), յերբ մեր կոլեկտիվները սկարապում են հավաքությամբ, ունին փորձնական փեթակներ և այլն: Պիոներները լավագույն աշխատակիցներն են հանդիսանում գյուղատնտեսական փոխառության պարտատոմսերի տարածման գործում: Բացի ընդհանուր ազիտացիայից, նրանք նույնիսկ իրենք անմիջապես տարածում են պարտատոմսեր: Որինակ, Ռամա-Լեշխումսի կոլեկտիվներից մեկը գնել ե 90 ռուբլու պարտատոմս: Աշխատանքի այս բնագավառում մեզ մոտ պակասում են կուլտուրական ուժեր և համապատասխան գրականություն:

Պիոներաշխատանքը դպրոցներ:

Պիոներկազմակերպության գործունեյության գոլիսավոր ասպարեզներից մեկը դպրոցն ե: Դպրոցական աշխատանքի բարելավումը, նրա ղեկավարությունն ու գործնական ոգնություն ցույց տալը,—ահա թե ինչ բան խորհրդածության նյութ պիտի դարձնի յուրաքանչյուր պիոներաշխատավոր:

1928/29 ուս. տարում պիոներական կոլեկտիվների ու ֆորպուտների թիվը զգալի կերպով աճել է: Նրանց թվական աճի հետ միասին բարելավվել ե նաև նրանց աշխատանքի բովանդակությունը:

Դպրոցական աշխատանքում պետք ե մատնանշել նվաճումները:

1) Դպրոցական կոլեկտիվների ու ֆորպուտների ցանցի ընդարձակումը:

2) Ֆորպոստների ու կոլեկտիվների աշխատանքի պլանային ու բովանդակալի լինելը (կոնկրետ աշխատանքներ՝ չոր ու ցամաք ժողովների ու ինֆորմացիաների փոխարեն):

3) Մանկավարժական կազմի գլխավոր մասի մոտեցումը պիոներկազմակերպությանը և նրա վորոշ մասին կազմակերպության գործնական աշխատանքի մեջ մասնակից դարձնելը:

4) Պիոներկազմակերպության հեղինակալորության աճը անկազմակերպ աշակերտության մեջ և պիոներների կողմից սկսած առանձին նախաձեռնությունները կյանքի մեջ տնցկացնելը (ակումբային որ, կարճատես հանգոտի կազմակերպումը, տաք նախաձաշիկ և այլն):

5) Դպրոցների հասարակական—քաղաքական մակարդակի բարձրացումը և պիոներկազմակերպության գոհացուցիչ ձեռներեցությունը:

Պետք ե մատնանշել նաև այդ աշխատանքի հետեւյալ թերությունները.

1) Ֆորպոստների ղեկավարների թույլ կազմը և նրանց հաճախակի փոփոխությունը,

2) Պիոներ կազմակերպությունից դուրս գտնվող դպրոցական գույքի կորստյան դեպքերը (մանավանդ գյուղերում):

3) Հակախորհրդային յերեւոյթների դեպքերը աշակերտության մեջ (չնայելով վերջին ժամանակներս այդ յերևոյթը չափազանց հազվադեպ ե):

Պիոներներն ու բնակչությունը.

Թե քաղաքում և թե գյուղում բնակչությունը ծանոթ չե պիոներկազմակերպության հետ: Յեթե

բնակչությունը նրա մասին վորեկ զաղափար ե ունեցել ապա այդ յեղել և միայն ցույցերի և փողի ու թմբուկի շնորհիվ: Կոլեկտիվներն աշխատել են փակված: Բնակչությունը չի տեսել նրանց աշխատանքի արդյունքը: Աշխատանքի նոր սիստեմը մոտեցրել և պիոներկազմակերպությունը աշխատավոր բնակչությանը: Յեթե գուշ գյուղում դիմեք գյուղացուն և հարց տաք, արդյոք նա վորեն բան զիտե՞ պիոներկութիվի մասին, նա անպայման կպատասխանի. «Ինչպես չե, մի քիչ առաջ նրանք այս ինչ այրի կնոջ գաղտը մշակեցին» կամ «Իրեն, պիոներները վերանորոգեցին այն ճանապարհը»: Բնակչությունն աստիճանաբար, պիոներների գործնական աշխատանքի հիման վրա, ծանոթանում ե պիոներկազմակերպության հետ և մոտենում ե նրան: Նշանակալից և ուշադրության արժանի յե այստեղ այն հանգամանքը, վոր նույնիսկ միենույն գյուղում բոլորն ել հավասար աշքով չեն նայում պիոներների վրա. Հքավորներն ու բատրակները գոհ են նրանցից, իսկ կուլակներին նրանք դուր չեն գալիս: Այս բանը վկայում ե, վոր պիոներկազմակերպության վորդեզրած գիծը ճիշտ ե:

Նման յերեսույթ նկատվում ե նաև քաղաքում: Ռազմակիւղացիայի բնագավառում կատարվող աշխատանքները, ծնողական յերեկույթները, ժողովները մոտեցնում են իրար ծնողներին ու պիոներկազմակերպությունը:

Պիոներներն արդյոք վորեկ ե բան կատարում են կենցաղային հարցերում: Կատարում և կատարում են բավական շատ: Թիֆլիսի կոլեկտիվներից մեկի վա-

րած կամպանիայի հետևանքով հինգ ծնող թողեցին ծխելը: Պիոներների մասսայալան արշավներ կատարվեցին կենցաղային այլանդակ յերեսույթների դեմ (հարբեցողության, չաղրայի, ծխելու և այլն):

Պիոներակազմակերպուրյունն ու անկազմակերպ յերեխաները.

Այն փաստը, վոր պիոներկազմակերպությունն աճում ե արագ տեմպով (ինչպես այդ կտեսնենք ներքում), վկայում ե, վոր անկազմակերպ յերեխաների մեջ աշխատանքը տարվում ե գոհացուցիչ կերպով: Վոչ մի կամպանիա, վոչ մի տոն չի կատարվում առանց նրանց մասնակցության: Անկազմակերպ յերեխաների ձգտմանը դեպի պիոներ կազմակերպություն՝ զարկ ե տալիս պիոներկազմակերպության հեղինակավորության աճը դպրոցներում և պիոներիութեամբ: Պործնական աշխատանքի բարելավումը:

Պիոներների տեղերում կատարած արշավները մեզ միանգամյան համոզեցին այդ բանում: Արշավնեներում մեծ մասամբ մասնակցել ե անկազմակերպ յերեխաների մինչև 20 տոկոսը (տոկոսը վերցված ե, նկատի առնելով մի շարք գավառներ):

Վորպես թերություն այս աշխատանքում, պետք ե նշել այն հանգամանքը, վոր անկազմակերպ յերեխաները բավարար չափով չեն ներդրավվել պիոներկութեամբ: Ամենորյա աշխատանքի մեջ (խմբակների աշխատանքում, հասարակողութ աշխատանքի մեջ և այլն): Բացի դրանից, թույլ աշխատանք ե տարվում գյուղի բատրակների և քաղաքի արհեստավոր աշակերտության աշխատանքի պաշտպանության բնագավառում:

Պիոներների ժիգիբական դաստիարակությունը.

Պիոներկազմակերպության մեջ ֆիզիքական դաստիարակչական աշխատանքի վրա առանձին ուշադրություն և դարձվում ամառ ժամանակը վորովհետեւ ձմեռը շենքի և միջոցների բացակայության պատճառով թույլ աշխատանք և կատարվում: Յէզիքական դաստիարակչական աշխատանքն ամառն արտահայտվում և թուցիկ եքսկուրսիաների, ամարային հրապարակների և լագերների կազմակերպությամբ:

Հաշվետու վերջին ժամանակաշրջանում առանձնապես մասսայական բնույթ ստացան հրապարակների ու լագերների կազմակերպության աշխատանքները, վորը չափազանց ցանկալի յեւ Հրապարակների քանակի մասին տեղեկություններ չունենք, իսկ 1929 թ. լագերները պիտի տարվեն մինչեւ հինգ հազար յերեխա, մինչդեռ անցյալ տարի լագերներում մասնակցող յերեխաների թիվը հազարից չեր անցնում: Միաժամանակ պետք ե ընդգծել նաև այն հանգամանքը, վոր լագերները կազմակերպել են գրեթե բոլորն ել դաշվառները (վորը պիտի վերագրել աշխատանքը ճիշտ ժամանակին սկսելուն):

Ֆիզիքական դաստիարակության գործում նկատված զլսավոր թերությունները հետևյալներն են. զեկավարների թույլ նախապատրաստությունը, շենքերի բացակայությունը, միջոցների սղությունը և թույլ ոգնությունը հասարակական կազմակերպությունների կողմից:

Պիոներների ռազմականացումը.

Պիոներների ռազմականացումը իր անմիջական նպատակն է (ռազմականացում), մեծ աժխուժու-

թյուն մտցրեց ընդհանրապես աշխատարքի մեջ: Կազմակերպված են մանկական ռազմա-հրաձգային խըմբակներ, առաջին ոգնություն ցույց տվող խմբակներ, տեղագրության, Մորգերի այբուբենի ուսումնասիրության և այլ խմբակներ (Թիֆլիսում, Քութայիսում Բաթումում և այլն): Կազմակերպվում են ռազմական մասսայական խաղեր ու արշավներ, կապ և հաստատված Կարմիր Բանակի գորամասերի հետ և այլն:

Ամենազլիսավոր պակասությունն այս ասպարեզում հանդիսանում ե այն, վոր մատնանշված նվաճումները վերաբերում են միմիայն քաղաքներին: Իսկ գյուղում այս աշխատանքը թույլ ե և Ոտ-Ավիաքիմն այս աշխատանքում մեզ չափազանց աննշան աջակցություն ե ցույց ե տալիս:

Միջազգային դաստիարակուրյուն.

Ներկայումս միջազգային դաստիարակության խնդրին մեր կուսակցության կողմից բացառիկ ուշադրություն ե դարձվում, մանավանդ մատաղ սերնդի մեջ: Ինչու այդ հարցը ներկայիս առաջին կարգում գտնվում: Նախ, նրա համար, վոր միջազգային դաստիարակությունը կոմունիստական դաստիարակության հիմքն ե կազմում, և յերկրորդ, նրա համար, վոր մեր յերկրի հզորության ընդհանուր ամրապնդումը գաղաղացրել ե մեր դասակարգային թշնամիներին, վորոնք ամեն կերպ սոցիալիստական շինարարության դեմ են գործում, նրանց դեկավարում են հականեղափոխական կուսակցությունների բեկորները, վորոնք փիզիքապես ու գաղափարապես ջարդ ու փշուր են յեղել մեզ մոտ: Պարզ ե, վոր բանվոր դասակարգի այս ամենադաժան

թշնամինները իրենց պայքարի ծրագրից չեն հանում մատաղ սերնդի սրտին յեղող լողունքը: Այդ իսկ պատճառով, մենք հաճախ տեսնում ենք նրանց կողմից հարձակումներ, զգեստավորված ազգայնական շովինիդմի պատմումանով: Այս յերեսույթը մանավանդ նկատվում ե գլորդում, վորտեղ այդ դասակարգերի նույնիսկ յերեխանները հաճախ աշխատում են մանրութուական քայլայում մտցել յերեխանների առողջ մասսայի մեջ: Այս բոլորին մեր կազմակերպությունը պետք ե պատասխանի առողջ միջազգայնականությամբ: Աշխատանքը միջազգային դաստիարակության բնագավառում տարվում ե մեզ մոտ կապ հաստատելու միջոցով հարեան հանրապետությունների և ոտար պետությունների կազմակերպությունների հետ: Յուրաքանչյուր կոլեկտիվ կապ ե պահպանում մյուս հանրապետությունների յերկու-յերեք կոլեկտիվների հետ: Ուղարկվում են թղթակցություններ, կատարվում են փորձերի փոխանակություն և այլն: Բացի դրանից, զրական կապ են պահպանում ոտար կազմակերպությունների հետ, սակայն այդ կանչը համեմատաբար թույլ ե: Զանազան ազգությունների պիոներներկոլեկտիվների փոխադարձ այցելություններ են կատարվում, կազմակերպվում են կապի-մերձեցման յերեկոներ. Որինակ, լազողեխ քաղաքում (Կախեթի գավառ) գոյություն ունեն վրացական, ուստաղ հայկական կոլեկտիվներ: Բոլոր յերեք կոլեկտիվներն ել սերտորեն կապված են իրար հետ: Ցխինվալի քաղաքում (Հարավ-Ռսեթիա) գոյություն ունեն վրացական, ոսական, ուսւական և հրեյական կոլեկտիվներ: Այնտեղ ևս կոլեկտիվները փոխադարձաբար

այցելում են արշավներին, կապ են հաստատել իրար հետ և այլն: Նոյն բանն ե Քութայիսի գավառում և այլ տեղերում:

Յերեխաների մեջ կազմակերպվել ե միջազգային կոպեկի հանգանակություն: Աղետյալներին ոգնություն ցույց տալու գործում պիոներները միշտ յեղել են առաջին շարքերում, որինակ լենինականի յերկրաշարժի ժամանակ, Զինաստանի դեպքերը, անգլիական հանքագործների յերեխաները և այլն:

Սօվուտանի հօկտեմբերիկների մեջ.

Հոկտեմբերիկների հետ տարգող աշխատանքի ձեւվերը դեռ վերջնականացես վորոշված չեն, դրանով ե գլխավորապես բացատրվում աշխատանքի թուլությունն այս բնագավառում: Բացի դրանից, մինչև այժմ նկատվել են աշխատանքի անկանոն բաշխման, հոկտեմբերիկների կազմակերպության կանոնադրության խախտման դեպքեր: Թույլ կերպով են կապված այս աշխատանքի հետ կուլտուրական ուժերը:

Այդ ասպարիգում նվաճում պիտի համարել խմբերի կազմակերպումը թի քաղաքում և թե գյուղում (բացի առանձին դեպքերից) և նրանց ստորաբաժանում աստղերի, խմբերի ղեկավարների կաղմի բարելավումը (միայն սակագ դեպքերում կարելի յենադիպել վոչ-կոմիյետ կամ մանկահասակ ղեկավարների), կազմակերպության մեջ բավական քանակությամբ յերեխաների կողմից հայտարարված մասսայական ձգտումը դեպի կազմակերպությունը և այլն:

Էնկավարություն յեզ աջակցություն կուսակցական, կոմիտերիտական յև հասարակական այլ կազմակերպությունների կողմից.

Կուսակցության ղեկավարությունը պիտիներ կազմակերպության վրա չափազանց թույլ ե:

Մանավանդ այդ նկատելի յե գյուղում: Հաճախակի յեն դեպքերը, յերբ գյուղում կա կուսակցիջ և նա վոչ մի տեղեկություն չունի նույն գյուղում գոյություն ունեցող պիոներ—կոլեկտիվի մասին:

Համեմատաբար ավելի լավ պայմանների մեջ և դժուկում կոմերիտմիության կողմից ցույց տրվող ղեկավարությունը, սակայն ցանկալի յե, վոր նա ևս ավելի լավ լինի: Սակավ ե պատահում, վոր բջիջի մեջ աշխատելիս լինի պիոներական աշխատանքի սիրողների խմբակ: Ընդհանուրապես կոմյերիտմիության ակտիվը խուսափում ե այդ աշխատանքից: Մինչև վերջին ժամանակներս մենք չկարողացանք մեր շարքերում փոխել վերաբերմունքը դեպի այդ աշխատանքը: Կոմյերիտմիության բջիջներում չեն կարգացվում պիոներ-կոլեկտիվների զեկույցներ, և յեթե կարդացվում ել են, ապա դա տեղի յե ունենում մեծ մասամբ ի միջի այլոց: Գործնականապես այդ զեկույցները վոչ մի արյունք չեն տալիս: Ինչ վերաբերում ե ավելի բարդ կանգնած կուսակցական ու կոմյերիտական կազմակերպություններին, նրանց պատասխանատվությունն ու ղեկավարությունը վերջին ժամանակներս ավելի լավացել ե:

Նույն գրության մեջ ե նաև այլ կազմակերպութունների (պրոֆմիություններ, կին բաժիններ և այլն) կողմից յեղած ղեկավարությունը: Այդպիսի

գեղքեր շատ կան: Այդ տեսակետից բնորոշ և Խոնիի գործկոմի (Քութայիսի զավ.) վարմունքը: Վերջինից պիոներների վերջին արշավի ժամանակ խորեցին փողավոր յերաժշտականումք: Գործկոմը մերժեց, պատճառաբանելով թե յերաժշտականումքո «հոգեհանգստի» պիտի դնա:

Կոլեկտիվների դեկավարները եւ Երաց նախագահատառությունը.

Կոլեկտիվների դեկավարների կազմը համեմատաբար բարելավվել և թե սոցիալական տեսակետից, և թե գորակի բարձրացման տեսակետից: Հատ վերջերս հավաքած տվյալների, դեկավարների ընդհանուր թվից (1339 հոգի) բանկորները կազմում են 10,30%, գյուղացիները՝ 54,70%, բատրակները՝ 2,20%: Այս թվերն ըստինքյան գոհացուցիչ են, սակայն համեմատած անցյալ տարիների հետ, սրանք մեծ նվաճում են համարվում:

Գորակի բարձրացումը նպաստում են ամեն տարի կազմակերպվող նախապատրաստական և վերապամրաստական դասընթացներն ու սեմինարները, ինչպես և դեկավարների սակավ փոփոխությունը (միջին հաշվով դեկավարը մնում է կոլեկտիվում 10 ամսից մինչև 1 տարի):

Այդ բանին նպաստեց նաև կենտկոմի կողմից հրատարակած «Դեկավարի գրադարանը». (1926 թվին ձեռնարկ ե հրատարակել վրացերեն լեզվով. «Աշխատանքն ըստ սիստեմի», «Պիոներական լազեր», «Աշխատանքի դպրոցում», «Ինչ ե աշխատանքի նոր սիստեմը» և «Աշխատանքը հոկտեմբերիների մեջ»):

Այդ բանը հնարավորություն տվեց մեր զեկավարներին յուրացնել հասկանալի լեզվով պիոներ աշխատանքի գլխավոր հարցերը:

Այդ աշխատանքի մեջ նկատված թերություններից պետք ե հիշել այն գեղքերը, յերբ բջիջները, վորակների, առանձնացրել են պասիվ լնկերների: Դեկավարների թույլ աշխատանքը ինքնազարգացման գործում, կուլտուրական ուժերի թույլ ներդրավումը դեկավարներին աջակցելու գործում և բանվորների, ու բարբակների մասնակցության ցածր առկուսը:

Կազմակերպության աձի հարցերը:

Պիոներ կազմակերպությունն աճում է թե քանակով և թե գորակով: Ներկայումս նրա շարքերում համախմբված ե 97,426 յերեխա: Իսկ ինչպես, ե կազմակերպության աճման տեմպը: 1928 թ. ապրիլ 1-ին գոյություն ուներ 1,326 կոլեկտիվ: Նույն տարվա հոկտեմբեր 1-ին այդ թիվը աճեց մինչև 1,395-ի: Հինգ ամսվա ընթացքում կազմակերպությունը մեծացավ 69 կոլեկտիվով: Առ 1-ն ապրիլի պիոներների թիվը (առանց հոկտեմբերիների) 60,346 եր, իսկ հոկտեմբերին՝ 68,581:

Տեղի ունի արդյոք վորակական աճ:

Ընդհանուր քանակից տղաները կազմում են 66,20%, աղջկերը՝ 33,80%: Բանվորների յերեխաները կազմում են 12,80%, բատրակների յերեխաները՝ 4,90%, գյուղացի յերեխաները՝ 460%, վրացիները կազմում են 64,50%, արխագները՝ 2,50%, աջարցիները՝ 2,80%, հայեր՝ 11,4, ոսեր՝ 6,0, ուսաներ՝ 5,2, թուրքեր՝ 3,1, այլ՝ 4,5.

Հստինքյան հասկանալի յեւ, վոր այս թվերը պետք ե մհծացվեն (մանավանդ բանվորների յերեխաների տոկոսը), և համեմատած անցյալ տարիների հետ սրանք լուրջ նվաճումներ են:

Մասնութություն. Վերոհիշյալ յեղբակացությունն աճի մասին այնքան ել ճիշտ չծ, վորովհետև համեմատությունն առաջ ե բերված ըստ 1926 թվի տվյալների, Վերջին ժամանակների թվերը վկայում են մեծ աճի մասին, սակայն վերջին ժամանակաշրջանի թվերի հետ համեմատություն չարինք այն պատճառով, վոր մի քանի տեղերից նյութեր դեռ չեն ստացվել: Բնութագրության համար առաջ կրեթենքյերկու ավելի խոշոր կազմակերպությունների տվյալները: 1828 թվին Կութայիսի գավառի պիտոների թիվը 6.479 եր: Հստ վերջին տեղեկությունների այդ թիվը արդեն հասել ե 9.764-ի:

Հստ 1928 թվի տվյալների Աջարիստանում յեղել ե 4.087 պիտոներ, իսկ ըստ վերջին տեղեկությունների՝ 4.560: Բանվորների յերեխաներ յեղել են 32%, իսկ այժմ՝ 35,4%:²

Քութայիսի գավառում ղեկավարների կազմում բոլորովին բանվորներ չեն յեղել, իսկ այժմ նրանք կազմում են 15,6%:³

Աջարիստանում յեղել ե 5,80%, իսկ այժմ՝ 13,90%:

Մոտավորապես այսպիսի պատկեր ունի աստիճանական աճումը Վրաստանի բոլոր կազմակերպություններում:

Յեղբակացություն:

Վերև առաջ բերած վերլուծությունը չնայելով կազմված ե հապճեղ կերպով և բավական աղքատիկ

ու կարճ ե, բայց և այնպես նա կարող է գաղափար առաջ մեր կազմակերպության դրության մասին: Նույն խոկ այս կարձ իմֆորմացիայում մենք աշխատեցինք խոսել ավելի շատ թերանթյունների, քան նվաճումների մասին: Հենց ՀՀԿԵՄ բնորոշ այդ գիծն ե, վոր մեզ ոգնեց հաղթահարել, ԼԿՅԵՄ Համամիութենական 8-երորդ և Անդրկովկասյան ու համավրացական 4-րդ համագումարներից հետո, մեր ճամբի վրա գտնված խոչընդուները: Այդ համագումարները մեզ տվին այն զիսավոր գիծը, վորի անշեղ իրագործման հետևանքով մենք արդեն ունենք բավական աշխատություն Վրաստանի պատանի պիտոնների կազմակերպության գործունեության մեջ:

Յեղբակամման մասում մենք արդեն կանգ չենք առնի առանձին թիրությունների վրա. նշենք միայն, վոր նրանք մեզ համար միանգամայն պարզ են, մենք դեպի նրանց արթուն վերաբերմունք ենք ցույց տալիս, և դա յերաշիք ե այն բանի, ովոր նրանք կվերացվեն մոտիկ ապագայում: Դրա համար անհրաժեշտ է շարունակել կենտրոնի գիծն ու ղեկավարության տեմպը, վորը համեմատած անցյալ տարիների հետ՝ բավական ուժեղացել ե (մի տարվա ընթացքում հետազոտության և յենթարկվել Վրաստանի ամբողջ պիտոններ կազմակերպությունը և յերկարատև աշխատանք ե տարված հինգ գավառներում): Մեր ապագա աշխատաքը պետք ե ինմուի գորություն ունեցող նվաճումների ամրապնդման վրա: Անհրաժեշտ ե բարձրացնել պիտոններ կազմակերպության ղեկավարությունն ու աջակցությունը կուսակցական ու խորհրդային որպանների և հասարակական կազմակերպությունների

կողմից: Ինքը, պատանի պիոներների կազմակերպությունունը ել ավելի պիտի ընդլայնի իր հասարակական-քաղաքական գործունեության շրջանը, վորի հետ մենք պետք են շարունակ կապակցենք մատադսերնդի կոմունիստական դաստիարակության հարցերը: Աշխատանքի նոր սիստեմի լայն ծավալման միջոցով մենք արմատապես պետք են վերափոխենք կուլտիվների աշխատանքի բովանդակությունը: Հենվելով ՀՀԿՅԵՄ համագումարների համապատասխան վորոշումների վրա, մենք և վնչ մի բողեք չափարարեցնենք մեր հոգացողությունն այն մասին, վորպես զի յուրաքանչյուր բջիջի մեջ աճի պատասխանատվությունը պիոներ կազմակերպության աշխատանքի հասար (ինչպես մենք այդ բանին հասել ենք գրեթե բոլոր ղեկավար որգաններում):

Մենք պետք են այնպես անենք, վոր ամբողջ մասուկ բնակչությունը համախմբվի պիոներ կազմակերպության շուրջը, հարկադրենք նրանց ակտիվ մասնակցություն ցւոյց տալ իրենց փոքրիկ ձեռներով մեր խորհրդային շինարարության յուրասանչյուր պրոցեսում, վորը, կրկնում ենք, պետք են սերտորեն կապահած լինի կոմմունիստական դաստիարակության սիստեմի հետ: Այդ բոլորից հետո միայն մենք կկարողանանք հաղթահարել բոլոր խոչնդուները և կկարողանանք ավելի ամրապնդել Հոկտեմբերյան Հեղափոխության գործը:

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

(Եսկիզից մի հատված)

Ամառն անցավ: Բանվորներն ու գյուղացիներ արձակուրդից վերադարձան:

Յերիտասարդությունը դիմեց գեղի ուսումնարաններ:

Փոքրիկ սենյակի անկյուններից մեկում պիոներները շախմատ են խաղում, մյուսում ֆուտբոլի դընգակն ուոցնում:

Կոտիկը ցանկանալով կրոկետի մուրճը շիներ հազիվ յերկու-յերեք կացնի հարված եր իշեցրել յերբ ամեն կողմից բողոքի ձայներ լսեց...

— Բան ես ուզում շինես, շինիր բակում, ի՞նչ ես կացնի ձայնով խացնում մեզ...

Կոտիկը բակ գուրա յեկավ:

Պատուհանի մոտ նստեցին հինգ փոքրիկ յերեխան եղուցյօց են անում Սերյոժայի և Վանիայի մրցակցության մասին:

Փոքրիկ Տանիան և միայն, վոր չի կարողանում վորեւ իմրին միանալ: Նա այս խմբից այն խումբն են անցնում, իսկ սրա համար ընկերներից շարունակ հանդիմանություն են ստանում.

— Ի՞նչ ես խելագարի պես այս ու այն կողմն ընկնում, մի տեղ չես նստում:

Զանձրացնում ես մարդուն քո այդ սովորությամբ:

* *

Սերյոժայի կարծիքով պետք ե զոր մըցության տարված լինի ինքը: Վանիան ահազին բան ե արել. կոլեկցիայի համար շատ հավագյուտ սաղափի, ծովային գունավոր քարեր, խեցիներ ճարել: Բացի այդ, հրաշալի յեն նրա նկարները, գեղեցիկ ե կալը կողակների ստանցայում (գյուղ), հետաքրքիր ե Եսսենտուկի «Սուժովկ» կայարանը, յերեխաներն ուղղակի հիացած են նրա կազբեզի արձանով, հրաշալի յեն նաև նրա մեծ ստվարաթղթի վրա կատարած աշխատանքը: Սա բաժանված ե յերկու մասի և «Առաջ ու այսոր» անունն ե կըում

Աջից. գեղեցիկ մի այգում հարուստ, յերկհարկանի ամարանցային տուն ե շինքած: Տունը համարյա թե դատարկ ե, միայն այգու մի անկյունում ծեր, տխուր զույգ ե նստել: Յերկում ե վաճառականներից պետք ե լինեն: Սրանց մեջաեղը, աթոռի վրա խոշոր մի դոգ (շան տեսակը) ե նստել և տխուր զիտում, թե ինչպես իրեն տերերը ծույլ-ծույլ կարծես չուզելով, զորով սուրճ են խմում:

Զախ կողմում, նույն այգին և նույն տունը:

Բայց բակը լի յե յերեխաներով. սրանք խաղում են, աղմկում, ծիծաղում: Պատուհանից դուրս են նայում հանգստի յեկած բանվորները, գյուղացիներն ու ծառայողները:

«Այո, Վանիան ինձնից լավ ե նկարում... Միթե կարելի յե համեմատել նրա նկարների հետ ձարախոռը, ինչքան ել նա խոշոր լինի, կամ սև տոպրակը և

իամ անշնորք կերպով խղմղած ծերուկ պապը... բայց չե՞ վոր մենք խրճիթ ենք շինել, ինչվոր հույսի կայծն եր յերբեմն փայլում Սերյոժայի մտքում—չե՞ վոր նա ակումբի յեր նմանվում...

— Իսկ սա ի՞նչ բան ե, հարցորեց գլխավոր դատավոր՝ մանուկներից ամենամեծը—Պետիան, ցույց տալով բերանները բաց յերեխաններով ըրջապատված ծերունու նկարը:

— Սա պապն ե... Մի ժամանակ նա լավ յերգիչ ե յեղել... գյուղում մանուկներին յերգեր ե սովորեցնելիս յեղել: Յես խնդրեցի նրան, և նա ամեն որ յերգեր եր սովորեցնում մեղ, նախ բակում, իսկ վերջը նաև խրճթում, բացատրեց Սերյոժան:

— Ի՞նչ խրճթում:

— Մենք, գյուղի յերեխաններս շինել եյինք պապի շտեմարանի տակ:

— Հետո, հետո, հետաքրքրվեց ղեկավարը:

— Յերկու անգամ յերեկույթ կազմակերպեցինք... ամբողջ գյուղը ներկա յեր մեր յերեկութին, բայց պետք ե ասած՝ գյուղը շատ փոքր եր, ընդամենը 11 տնից բաղկացած:

— Ի՞նչու մինչեւ այսոր չեյիր պատմում մեղ...

Բայց կաց, կաց, սա քո մասին հո չե՞ր գրված լրագրում, ասաց նախագահը և մտավ հարեան սենյակը...

Յերեխանները հետաքրքրությամբ սպասում եյին նախագահի վերադարձին:

— Մի պարզ ասա, թե ի՞նչ ես արել գյուղում.

— Պապի շտեմարանի ներքին մասը վոչ այլ ի՞նչ եր, յեթե վոչ մի մարագ, վորտեղ ձմեռժամանակ խոս

ու դարձան են պահում, իսկ ամառը բոլորովին դատարկ է մնում: Մենք այդ մարագը մաքրեցինք, պատերը զարդարեցինք լրագիներից կտրտած նկարներով, անկյունում կախեցինք մեր զբոշակն ու թմբակը, մի քիչ ել գրքեր ճարեցինք... Պապը մեզ հենց այդանու քիչ ել գրքեր սովորեցնում... մի յերկու անգամ յերեք յերգեր սովորեցնում... մի յերկու անգամ յերեքույթ կազմակերպեցինք... Ներկա եյին և հասակավորները... այդ նույն մարագում մենք հավաքվում եյինք, խաղում...

— Գյուղացիներ առհասարակ շատ լույլ խաղեր ունեն, վրա բերեց յերեխաներից մեկը.

— Ἡράξ θυμητεῖ.

— Ուինսակ ջերեթ, ձիարշավ, նետ արձակել և
այլն.

Մտավ դեկավարը լրագիր ձեռքին:

— Ահա թե ինչ ե զբում ձանապարհորդներից
մեկը, սկսեց նա.

«Բարալեթ կոչված փոքրիկ գյուղն յեկավ մի պիոներ. նա ժողովեց իր հաստիակեց տղաներին և աղջկեներին: Նրանք ցամաքեցրին բակի մոտ գտնվող ճահիճը, կարգի ձգեցին գյուղի փողոցները, մաքրեցին գյուղացիների բակերը, հիմնեցին մասնկական ակումբը:

Առաջ այստեղ ինչպես յերեսում ե կիր ու ածուխ
այրելու վառարաններ են յեղել. վոչվոքի մտքով չեր
անցիլ լցնել այդ փոսերը, վորոնք մոծակի, գորտերի
և մթջատների բուն եյին գարձել: Գյուղացիներն ու
գլխավորապես յերեխանները հատուկ սիրով և շնորհա-
կալությամբ են հիշում այդ պիոներին: Տարաբախտա-
բար յես չկարողացա իմանալ այդ պիոների անունը,
չկարողացա տեսնել նաև այն, ինչ վոր շինել եյին յե-

բեխաները նրա ղեկավարությամբ, վորովհետև շատ եյի շտապում, բայց իմ ուղեկիցս այս բոլորը պատմել ե ինձ»:

— Պատմիր մանրամասն, թե ինչ ե արել, աղա-
ղակում ե,ին ընկերները:

— Ծերունին սկզբներում հակառակվում եր, ըստ կաց Սերյոժան շփոթված, կարծես չգիտենալով, թե վորատեղից պետք ե սկսեր ու ասում եր այն, ինչ վոր հիշում եր, բայց վերջը, յերբ մենք նրան կեռաս քաղել ողնեցինք — համաձայնվեց... Ահա այդ ժամանակ մենք մաքրեցինք նրա բակը ձարխոտից, շամբուկ և այլ խոտերից... Նա մեղ գուրզուրեց, փայփայեց, սալոր տվից:

Այսուհետեւ մի ուրիշ պառակ կնոջ բակը մաքրեցինք. բակը լի յեր աղբով և խոտով: Յերկու տարի առաջ մեռել եր նրա վորդին ու նրան միակ ոգնական եր մնացել ինձ հասակակից թոռը: Վերանորոգեցինք նաև նրա քանդված խրճիթը: Ինչքան շնորհակալ եր խեղճը:

— Հետո, հետո.

Հետո այս, վոր ուրիշ կանայք ել խնդրեցին
կարգի ձգենք իրենց բակերը.

— ԶԵ՞ վոր այդ շրջանում առհասարակ բակերը շատ մաքուր ելին պահում միշտ, ի՞նչպես պատահեց, Սերյոժա, վոր այդպես կեղտոտ են պահում այժմ.

Ակրլութան մի փոքր կանգ առավ, մտածեց.

— Յերիտասարդությունը գնում և շրջակա քաղաքներն ու հանքերն աշխատելու, տանը մնում են միայն ծերերը և բան չեն կարողանում հասցնել:

— Հասկանալի յե, հասկանալի.

- Ճահիճը՝ դժւք ցամաքեցրիք.
- Վոչ ասենք այս, ճահիճը ցամաքեցնելիս մեզ ոգնում եյին հասակավորները։ Մենք միայն սկսող, հախաձեռնողներ եյինք լինում։
- Ուրեմն դու այն պիոներն ես, վորի մասին կարգացինք այս բոպեյիս, կեցցես, գովեց նրան ղեկավարը, կեցցեն և գյուղի յերեխաները։
- Այս, նրանք հրաշալի մարդիկ են, ավելացրեց Սերյոժան։
- Պետք ե մի բանով ոգնել նրանց, կազ հաստատել նրանց հետ, ավելացրեց վանյան։
- Պետք ե, պետք ե լսեց ամեն կողմից։
- Մի բան ուղարկենք, այ որինակ գրքեր, վրա եյին տալիս մյուսները։
- Բայց չե՞ վոր նրանք գուել կարդալ չգիտեն, գյուղը փոքրիկ ե, ինչպես յերեսում ե բոլորովին նոր, հետեւապես դպրոց դեռ չեն ունենա, արդարացրեց Սերյոժան իր գեղջուկ բարեկամներին։
- Հապա ինչ ուղարկենք։
- Գիտեք, յերեխաները շատ վատ եյին հարդնված, շորը ավել պետք ե ուրախացնի նրանց, ասաց Սերյոժան։
- Թանգ կնսողի։
- Իսկ քանի՞ յերեխա ունեն։
- Գյուղում 17-ից ավել յերեխա կար, Մեղ հետ միայն 11-եյին՝ 6 տղա 5 աղջիկ։
- Պետք ե ուսուցիչ ուղարկել, խորհուրդ տվին մյուսները։
- Յեկեք այդ հարցը քննենք ժողովին և վորոշենք, թե ում պետք ե դիմենք այդ հարցով։ Ավելի

լավ կլինի, ժողովի վորոշումն ավելի ույժ է ունենալու։

— Ենք, Սերյոժա, կարծես բարկացած տոնով ասաց մեկը, բայց մյուսներն աղմուկ բարձրացրին և լուցը լինկերով։

Սերյոժայի, գրկեցին, բարձրացրին ձեռքերի վրա և սկսեցին ճոճել ոդում։

Սերյոժան շփոթված չգիտեր ինչ աներ, իսկ ընկերները շարունակում եյին ձեռքերով ոդում պահել նրան։

Այդ ժամանակ պիոներներից մեկը բարձր ձայնով աղաղակեց։

— Պատրաստ,

— Միշտ պատրաստ—լսվեց Սերյոժայի ձայնը ու ձգվելով ոդում, յերեխաների գլխների վրա, պիոների պես ձեռք բարձրացրեց, վողջունեց ընկերներին։

ՊԻՌՆԵՐԱՐՉԱՎ

Հուզմունքից սիրտը կկու յե դառած,
 Զի հանգստանում կուպեյում փակված,
 Թրվում ե նա, ուզում ե թռչի,
 Թևարձակ հասնի յեռկիրն իլիչի:
 Սուլում ե, հեռմ շոգեմեքենան,
 Սուրում ե արագ նա նետի նման՝
 Յերկար—մեկ ձգված ոելսերի վրա:
 Գնացքի անիմսերն մեր յերգից հուզվել
 Իրենք ել իրենց տաղերն են հյուսել:
 Դեպի Մոսկվա յենք սավառնում, Մոսկվա,
 Դեպի անդրանիկ պիոներհավաք:
 Ամեն յերկրի ու ամեն ազգության
 Այնտեղ բազմաթիվ պիոներ ընկերներ
 Պայծառ աչքերը դեպ մեզ են հառել,
 Ինչպես միլիոն լուսատիտիկներ:
 Կամրացնենք կապը կուռ յեղբայրության,
 Փոխադարձ կապը պիոներ սերնդի,
 Թող լինի մաքուր մի հաշվիհարդար,
 Թող ապագայի ուղեցույց լինի:
 Ու շիրիմի մոտ ընկեր լենինի
 Ծով գումարաւակը պիոներական
 Ազնիվ խոսք կտա - վտանգի ժամին:
 Լինել միշտ պատրաստ ու միշտ հաղթական:
 Վողջույն քեզ, քեռի Ստալին—անսասան,

Յերգում ենք տալիս բոլորս միաձայն՝
 Կոմկուսի գծով քայլել դեպ առաջ
 Նրա ուղիով գործել աննահանջ:
 Ո՞, ինչ անսահման ուրախ ե այսոր—
 Ամեն ազգության մանկանց հետ մեկտեղ
 Կուռ յեղբայրության կապեր հաստատել:
 Հուզմունքից սիրտը կկու յե դառած,
 Զի հանգստանում կուպեյում փակված,
 Թրվում ե նա, ուզում ե թռչի,
 Դեպ մրցահրավեր—յերկիրն իլիչի:
 Սուլում ե, հեռմ շոգեմեքենան,
 Սուրում ե արագ նա նետի նման:
 Գնացքի անիմսերն մեր յերգից հուզվել
 Իրենք ել իրենց տաղերն են հյուսել:
 Դեպի Մոսկվա յենք սավառնում, Մոսկվա,
 Դեպի անդրանիկ պիոներհավաք:
 Ամեն յերկրի ու ամեն ազգության՝
 Այնտեղ բազմաթիվ պիոներ ընկերներ
 Պայծառ աչքերը դեպ մեզ են հառել,
 Ինչպես միլիոն լուսատիտիկներ:

ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ

Մեր կոլեկտիվը գտնվում ե տեկստիլ գործարանին կից:

Փոքրիկ այգում ծառերի տերևները անուշ խըշ-խշում են, իսկ քիչ հեռու՝ գործարանի ելեքտրոկայանն ե հեռում:

Իմ և ընկերներիս ծնողներն աշխատում են գործարանում, իսկ մենք դեռ սովորում ենք ու խաղում:

Մեր կոլեկտիվը գործարանի յենթաշեֆ գյուղի պիոներներից մրցության հրավեր եր ստացել: Կոլետնահսության պիոներ-կոլեկտիվը, վորի հետ մենք կապ ենք հաստատել, շաբաթնորյակ եր կազմակերպել ու հնձել մեծ պատերազմի հնվալիդ Հայրո ամու արտը:

Մտածում եյինք, թե ինչով պատասխանենք գյուղի ընկերներին, ինչ անենք, վոր լավ լինի: Միաժամանակ շատ եյինք ուզում մասնակցել պիոներ-արշավին, տեսնել հակա Զագեսը, պողպատե լենինին, վորոնց նկարներում շատ եյինք տեսել-իրականում վոչ, խոսել ընկեր պիոներների հետ, զրուցել զվարճանալ:

Արշավի սկսվելուն դեռ յերկար ժամանակ կար: Սպասում եյինք Քեռի Սարգսին: Քեռի Սարգիսը հին բանվոր ե, լավ ընկեր, լավ կուսակցական, լավ աշխատող, այդ հատկությունների համար նրան առաջ

են քաշել, գործարանի վարիչ դարձրել: Նա գնացել եր Թիֆլիս զործարանի 5-ամյա պլանի հաստատմանը ներկա լինելու...

Մեր բախտից Քեռի Սարգիսը շուտ վերադարձավ: Կոլվարը զրուցեց նրա հետ և ամեն ինչ պատրաստ եր: Մեր ուրախությանը չափ չկար: Գիտակցում եյինք, վոր ոգնելու յենք մեր հայրերին, ընդհանուր գործին:

Ընկեր Սարգսից վերցրինք հնդամյա պլանի բոլոր նյութերն ու սկսեցինք աշխատել:

Պիոներ Ազիզը նկարեց մի մեծ լենին, վորը մատըն առաջ մեկնած, ցույց ե տալիս արդյունաբերության զարգացումը հինգ տարում, Վանոն դիագրամի գույնզգույն թղթերն եր կտրտում, Վազգենը ներկ պատրաստում ու քթի տակ մռմռում, պիոներ Սեդիկի գրած վրանավորները՝

Սրտում աշխարհի Մոսկվայում,
Յեռուն, զնդուն,
Թնդուն թմրուկն ե թունդ թնդում:
Ծնծղան ցնծում...

Պետյան ներկ եր քսում, Աստղիկը զրում եր, մի խոսքով բոլորս աշխատում եյինք ուրախ-ուրախ: Վորոշեցինք գնալ յերեկոյի, ուր քեռի Սարգիսը պիտի խոսեր:

Պստիկ Սուրբիկին, վորի կարճ հասակի համար «Պստիկ» մականունն եյինք կպցրել՝ հանձնարարեցինք խոսելու. նա չեմուչում չարեց: Ամեն ինչ պատրաստ եր:

Եերբորդ որը աշխատանքներս վերջացրինք, խընամքով հավաքեցինք մակետները, դիագրամները, նըկարները, տարանք ցուցադրեցինք գործարանի ակումբում:

Ինչքան լավ եր, ինչքան ուրախ եցինք...

Զեկուցումի գիշերը սոլորս հավաքվել ելինք ա-
կումբ, ուշի ուշով հետեւում ելինք, թե ինչ են ասում
մեր ծնողները:

Ժողով բացվեց: Ընկեր Սարչիսը խոսեց հնգամյա
պլանի մասին, բացատրեց նրա նշանակությունը,
մենք լսողություն դառձած հետևում եյինք: Քեզի Սար-
գիսը մեզ չմոռացավ. նա վերջում շնորհակալություն
հայտնեց մեզ, ապա ցած իջավ ու համբուրեց պստիկ
Սուրիկին՝ վորը գոռում եր՝

— Կեցցե հնգամյա պլանը:

Յերբ ծափերից ու. կանչերից դղրդացող դահլիճը
հանդարձվեց, Սուրեկը բեմ բարձրացավ ու ասաց:

— Ըսկերներ, յես վողջուռում եմ մեր հնգամյա
պլանը՝ պիոներների կողմից ու խոստանում, վոր մենք
պիոներներս... միշտ պատրաստ ենք... ոգնել... մեր
հայրերին ու մայրերին...

Ու ուրախ եյինք ու հպարտ, վոր ոգնում ենք
ծնողների ընդհանուր գործին, սևերես չեյինք մնում
գյուղի ընկերների առաջ:

Արշավի որերը մոտենում ելին, մենք միաձայն վորոշեցինք ուղարկել Սուրեկին Թիֆլիս:

Սուրիկն այժմ Թիֆլիսումն եւ Շուտով կվերադառնա ու կպատմի մեզ՝ հսկա Զագեսի ու պղղպատե կենիսի մասին, վորը ձեռքն առաջ մեկնած, ցույց ետալիս բոլորիս ուղին: Նա կպատմի պիոներ Իվանի, Ալիի, Միխոյի, Գրիշի, ու նրանց գործի նրանց աշխատանքի մասին:

ԽԱՐՈՒՅԿԻ ՄՈՏ

Ամարային պարզկա գիշեր եր:
Պիոներական ձամբարը քուն եր մտել: Բազմա-
թիվ ցեր ու ցան յեղած աստղերի արանքից ժպտում
եր վոսկելույս լուսինը:

Ճամբարի մոտը խարույկ եր վառվում: Խարույկի ծովսը վոլորվելով բարձրանում ու մերվում եր յերեկոյան գորշ խավարին: Խարույկի շուրջը բոլորեւ եյին Միկսակն ու Հովհեկը: Նրանք գիշերային պահակներ եյին: Վորպեսզի գիշերն անցնի, նրանք պատմում եյին իրենց կյանքից այս կամ այն դեպքը: Միկսակը վերջացրել եր, հերթը Հովհեկին եր:

* * *

«Մութ գիշեր եր, այսպէս սկսեց նա իր պատմությունը, լուսինը վաղուց թագնվել եր լեռների թիվունքում։ Ամբողջ գյուղը վաղուց արդեն քնել եր, կունքում։ Ամբողջ գյուղը վաղուց արդեն քնել եր, վոր մենք ժողովը վերջացրինք։ Ըսկերներս մոտիկ եյին ապրում, իսկ յես հեռու։ Մեն-մենակ բավական ճանապարհ ունեյի գնալու։

Գյուղը քուն մտած, մշակում եր: Զայն ծպտուն
չեր լսվում, միայն քամուց որու Վող բարդիների տե-
շեր լսվում, միայն քամուց որու Վող բարդիների տե-
շեր լսվում, միայն խշալով աղմկում: Անցել եյի մեծ փո-
րեներն եյին խշալով աղմկում: Անցել եյի մեծ փո-
րեներն են և ուզում եյի ծովել մյուսը, վոր մոտակա-
ղոցը, են և ուզում եյի ծովել մյուսը, վոր մոտակա-
ղոցը, մեկում ականջիս ձայների շշովներ հասան,
Մթության մեջ հազիվ ջոկեցի Ծատուրանց տունը

Չայները այնտեղից ելին լսվում: Հետաքրքրությունը շարժվեց: Մոտեցա չթածածկ պատուհանին: Վուշինչ չեր յերկում: Վերջը մի փոքրիկ արանք դատա: Նայեցի: տեսնեմ, թախտի վրա, գունավոր մինդարներին ծալապատիկ նստել ելին Ծատուրն ու Սարիբեզը: Ես յերկում ել կուլակներ ելին: Նրանցից մի քայլ հեռու, սեղանի մի ափին նստել եր նախկին սուդիա՝ Արշակը, մյուս ափին ել Տեր-Մարուքը:

— Պետք ա դրա գլխին ոյին խաղալ մեկ ել տեսար մեղ ել կազեթ զցեց, են վախտն արի ու ել ցեխից հանի, խոսեց Ծատուրը լիք թշերն ավելի ուսուցնելով ու յերկար բեղերի ծայրերը վոլորելով:

— Աղա, Ալեքը հիշմամ չեք ինչ եր, փալնքու հոտաղ, ով եր նրան մարդ ասող: Իսկ հիմի ինչ գնաց կարմիր բանակ, թազա շորեր հագավ, գրաճանաչ դառավ... խոսեց Տեր-Մարուքը:

— Հա ե... եղ ասա ե... ձպճպացրեց աչքերը նախկին սուդիա Արշակը:

Լեզուս կծեցի: Ալեքը մեր գեղխորհրդի նախագահն եր: Ես վոր իմացա, վազեցի Ալեքի մոտ: Քնած եր, արթնացրի: Ամեն ինչ պատմեցի: Նա ժպտաց, համբուրեց ճակատս և ասաց, վոր հանգիստ գնամ քնելու:

*

Անցավ մի շաբաթ:

Ալեքն իրիկնապահին քաղաքի ճանապարհը բըսնեց: Հենց եղ գրշեր, Ալեքի գնալուց հետո, Ծատուրանց տան մոտով անցնելիս վրտքերի ձայն լսեցի: Յես կըծեկեցի պատի տակ, աթարի գեղերի կողքին: Ծատուրանց գուռը ճոռաց, գուրս յեկան ինքը Ծատուրը մեկ ել Սարիբեզը: Զորս կողմը մութ խավար եր: Ինձ չտեսան:

— Ալեքը ճանապարհի կեսը կտրած կլինի: Շուտ ձիյերը...

— Թող կտրի, ճամբի կեսին ել մենք իրեն կը-կտրենք... արյունթաթախ գետին կփռենք... այ, են վախտը թող ինձ կազեթ զցի, քմծիծաղ տալով վեր-ջացրեց իր խոսքը Ծատուրը:

— Հաե... եղ ասա ե... դուան արանքից լսվեց Արշակի նվազ ձայնը:

Մի քիչ հետո, յերկու ձի առաջ վազեցին, իրենց հետ տանելով Ծատուրին ու Սարիբեզին:

Յես թուա թջի քարտուղարի մոտ: Հետո վաղեցի գեղխորհրդի գոմը ձիյերի հետեկից: Մեր ձիյերը ճանապարհ ընկան, իրենց հետեկից բարձրացնելով գորշ փաշի: Մեր բախտից ամպերի արանքից լուսինն յերեաց: Հինգ հոգի ելինք: Արագացրինք ձիյերի վազքը: Հասանք տեղ: Ալեքին գետին զցած խեղդում ելին Ծատուրն ու Սարիբեզից: Մենք վրա հասանք: Սկսվեց կոկվը: Մի հինգ րոպե հետո, յերկու չարագործները կապկալված, գլուխները կախ քայլում ելին հետ—դեպի կապկալված, գլուխները կախ քայլում ելին հետ—դեպի գյուղ: Զմուն մութ գիշերից ավելի մռայլ ելին նրանց գեմքերը:

Նրանց հետեկից հանգիստ, համաչափ տոփյուններով մեր ձիյերն ելին առաջանում:

Տերկրորդ որը ամբողջ զյուղը հավաքվեց ակումբ: Դատում ելին Ծատուրին, Սարիբեզին, նախկին սուդիա Արշակին ու Տեր-Մարուքին»:

Լուսինն արդեն մայր եր մտել իսկ խարույքը դեռ շարունակում եր ծիսել յերբ Հովիկը վերջացրեց իր պատմությունը:

ՊԻՌԱԵՐՀԱՎԱՔ

Թմբուկներ զարկենք.
Պիռներն ե գալիս,
Դեղ լայն հրապարակ,
Դեղ պյոներհավաք:

Պիռներն ե գալիս
Շարքերով հաղարտ
Փարված լենինյան
Ռւղին անողարտ:

Ես թնչ ե, ես թնչ
թնչ /մրցահրավիր,—
Ամեն կոլեկտիվ
Իր ույժն ե բերել:

Աշխարհի ամեն
Ծայրից հեռակա
Թափոր են կազմել
Մուկվայում հսկա:

Աշխույժ յերգերից
Փողոցն ե թնդում,

Արևն ե թառել
Նրանց մատաղ սրտերում:

Յեկեք, ջան, յեկեք,
Պիռներ ընկերներ,
Զեր ժիր թևերով
Հաղթանակ բերեք:

Թմբուկներ զարկեք,
Փողեր փշեցեք,
Կարմիր դրոշի տակ
Յեղեք միշտ պատրաստ:

**ՎՐԱՍՏԱՆԻ ԼՈՒԺՈՂԿՈՄԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԻՌՆԵՐ ՀԱՎԱՔԸ
ԿՍԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ:**

1. Հրատարակել «Առաջին պիոներհավաք» բրոցյուրը հետեւյալ չորս լեզուներով՝ վրացերեն—10.000 որինակ, ոսերեն և թուրքերեն 2.000—ական և հայերեն 3000: Գրքուկը պետք է հատեյալ բաժիններն ունենա. I.—Պիոներական հավաքի նշանակությունը (սոց. դաստիարակություն, ինտերնաց. դաստիարակություն և այլն). II.—Պատանի պիոներների Անդրկովկասյան կազմակերպության կացություն; III.—Պիոներ կազմակերպության դրությունը (աշխատանքային դաստիարակությունը դպրոցներում, ազգոնոմիզացիա, տեխնիքական դաստիարակություն, պիոներների մասնակցություն սոց. շինարարության մեջ, պիոներների ազգեցությունը անկազմակերպ յերեխաների վրա, խորհրդային հասարակության մասնակցությունը պիոներների աշխատանքին, աշխատանքի վորակը, բովանդակությունն ու քանակը): IV.—Պիոներաշխատանքի զարգացման հեռանկարներին ու կուսածողկոմատի ձեռք առած միջոցները. V.—Գեղարվեստական զրականությանը:

2. Պիոներհավաքի նշանակություն ու կուսածողկոմատի մասնակցությունն այդ գործում (բոլոր լրագրներում):

3. Զեկուցում պիոներական կոնֆերանսին (բովանդակությունը նույննե ինչվոր գրքույկենը)

4. Զարդարա կուսածողկոմատի շենքի ճակատը, (գործարաններին գյուղատնտեսության փոնի վրա պետք ե արտահայտել լենինը և պիոներների մասնակցությունը սոց. շինարարության մեջ) ունենալ լոգունգներ ու հրավառություն:

5. Անդրկովկասյան տեխնիքական կայանին կից հիմնել բնագիտական կարինետ, վրաստանի կուսածողկոմատի հաշվով:

6. Կառուցել կոջորում ամառն, հանգստի տւոն, 100 պիոների համար, նույն կոջորում հողամաս հատկացնել այդ տեղ գյուղատնտեսական աշխատանքները կատարելու համար, պահել անհրաժեշտ շտատ ծառայողների ինչպես և մեկ մանկավարժ ու մեկ ազբոնում:

7. Մրցման հրավիրել Հայաստանի և Աղբյա՞ծականի կուսածողկոմատները պիոներհավաքի տարեգարձին պիոներական որինակելի տուն կազմակերպելու համար:

8. Մոսկովի Մանկավարժական ինստիտուտ ուղարկել կուսածողկոմատի հաշվով 5 կոմյերիտական (3 տղա և 2 աղջիկ) պիոներշարժումն ուսումնասիրելու համար.

9. Վր. պրոֆմիութ. Խորհրդի և Լ. Կոմյերիտամիության համաձայնությամբ Գորի և Քութայիս քաղաքներ ուղարկեց բանվորական հանձնաժողով պարզելու համար թե ինչ մասնակցություն են ունեցել պրոֆեսիոնալ կոոպերատիվ, կուսակցական և կոմյերիտական կազմակերպություններն այդ տեղերի պիո-

ներ կհլեկտիվների և մանկատների դրությունն ու
աշխատանքները բարելավելու գործում պիոներ հավա-
քից հետո:

10. Լուսժողկոմատը պետք անմիջական և ակ-
տիվ մասնակցություն ունենա աշխատանքի որը կազ-
մակերպելու գործում, վորից գոյացած ամբողջ գումա-
րը պետք ծախսվի պիոներ կազմակերպության դրու-
թյունը լավացնելու համար.

11. Բնդհանուր ցուցահանդեսին կազմակերպել
մանկական դրականության անկյուն:

12. Համագիութենական պիոներ հավաքին գոր-
ծուղել Լուսժողկոմատի մեկ ներկայացուցիչ:

13. Աշխատանքի և պիոներհավաքին աջակցելու
համար Լուսժողկոմատին կից ունենալ աջակից կոմի-
տե հինգ հոգուց բաղկացած.

14. Պիոներշարժման վերաբերյալ մի շարք հան-
րամատչելի գրքույկներ հրատարակել.

15. Լուսժողկոմատին կից ստեղծել Անդրկովկաս-
յան պիոներհավաքին աջակցող կոմիտե հիտեյալ կազ-
մով.

1. Մարիա Որախելաշվիլի;
2. Մարիա Լոմինաձե;
3. Սիմառուլիձե;
4. Կերեսելիձե;
5. Մայսուրաձե:



«Ազգային գրադարան



NL0187447



ԱՐՄԵՆԻԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԻՒՂԻՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԳՈՎԱՌՈՒՅՆԻՆ
Կրաստանի ԼՈՒՍԴՈՒՆԿՈՄԱՆԻՑ